



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

N \_\_\_\_\_

### ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Շնորհավորում եմ սեպտեմբերի մեկի՝ Գիտելիքի և դպրության, ինչպես նաև նոր ուսումնական տարվա մեկնարկի առթիվ:

Խոսքս, նախևառաջ, ուզում եմ ուղղել առաջին դասարանցիներին ու առաջին կուրսեցիներին:

Միրելինե՛րս, դուք մուտք եք գործում նոր հետաքրքրություններով ու բացահայտումներով լի կյանք, որը ձեզ համար բացելու է մինչ այս անձանթ հորիզոններ: Փորձե՛ք առավելագույնը օգտվել այս հնարավորությունից, սկսե՛ք ուսումնասիրել գիտությունը, գտե՛ք ձեր բնագավառն ու հմտացե՛ք դրանում:

Կլանե՛ք մանկավարժների՝ ձեզ փոխանցած ամեն մի խոսքը, միևնույն ժամանակ, մի՛ վախեցեք հարցեր տալուց ու սխալվելուց:

Հարգե՛ք ձեր մանկավարժներին, գնահատե՛ք նրանց միջավայրում անցկացրած յուրաքանչյուր վայրկյանը: Զբաղվե՛ք ինքնակրթությամբ ու շատ կարդացե՛ք: Եղե՛ք նաև իսկական ընկեր ու դասընկեր, աջակցե՛ք ու սատարե՛ք իրար, բարձրացե՛ք ու բարձրացրե՛ք, որովհետև ուսումնական տարիները կարևոր են նաև մարդկային որակներ ձեռք բերելու ու հարաբերություններում որոշակի արժեհամակարգ ձևավորելու համար:

Առանձնակի շնորհավորում եմ նաև բոլոր մանկավարժներին, իսկ կենսաթոշակի անցնող մեր սիրելի վաստակաշատ մանկավարժներին շնորհակալություններս և հարգանքներիս հավաստիքը:

Շնորհավո՛ր սեպտեմբերի մեկ: